Հարցեր և առաջադրանքներ

1. Ժամանակակիցների հուշերի հիման վրա բնութագրիր Զոհրապին՝ որպես գրողի:
2. Վերարտադրի՛ր գրողի կենսագրությունը, ներկայացրու ապրած ժամանակաշրջանը, միջավայրը և կապի՛ր նրա ստեղծագործության հետ:
3. Կենսագրությունից ելներով՝ գնահատիր Գր. Զոհրապի կյանքն ու ստեղծագործությունը՝ նրա ապրած ժամանակաշրջանի համատեքստում:
4. Գնահատիր գրող-քաղաքացուն, նրա ծավալած գործունեությունը մեր ազգային արժեքների և գաղափարախոսության պահպանման, զարգացման և տարածման գործում:
5. Մեկնաբանիր՝ ինչո՞ւ է նովելը վերնագրված «Ճիտին պարտքը»: Բացահայտիր վերնագրի ու բովանդակության ներքին կապը:
6. Այս երկը համեմատիր այլ նորավեպի հետ: Գտիր համեմատության եզրեր:
7. Բացատրիր՝ «Երջանիկ մահը» նորավեպի որ մասերն են առանձնապես տպավորիչ և հուզական քեզ համար: Ասածդ հիմնավորիր բնագրից ընտրված օրինակներով:
8. Գնահատիր Վասիլիկի և Զաբուղոնի արարքները: Կարծիք արտահայտիր:
9. Գնահատիր ստեղծագործության նշանակությունը և գաղափարական ազդեցությունը թե՛ անհատի, թե՛ հանրության կյանքում:
10. Վերլուծիր տվյալ նորավեպերի կերպարների զարգացման քայլաշարերը:
11. Ուսումնասիրի նորավեպերի լեզուն և ոճը, օրինակներով ցույց տո՛ւր գրողի վարպետությունը կերպար, միջավայր, պատկեր ստեղծելու, գաղափար և զգացմունք փոխանցելու առումով, ինչպես նաև՝ գրական կերպարներ կերտելու վարպետությունը և արդիական բնույթը: